

**«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի
Փոքր դրամաշնորհների հայտի ձև**

Ծրագրի անվանումը	«Քաղաքացիական վերահսկողությունը, որպես կոռուպցիոն ռիսկերի նվազեցման գործիք»
Կոնտակտային անձ և կոնտակտային տվյալներ	Էդգար Խաչատրյան 093-820-632 / 055- 820-632/ 055 860 119 ekhachatryan@peacedialogue.am
Ծրագրի իրականացման վայրը (մարզ, համայնք)	Լոռու մարզ, ք. Վանաձոր
Ծրագրի տևողությունը	4 ամիս, մայիս-օգոստոս
Ծրագրի հակիրճ նկարագիրը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է բացահայտել Վանաձոր քաղաքում տրանսպորտի ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը և ոլորտի գործունեության բարելամանն ուղղված առաջարկների փաթեթ մշակել
Ծրագրի բյուջեն (նշել դրամով)	1 779 800ՀՀ դրամ
Ծրագրի գործընկեր կազմակերպությունը (եթե առկա է)	

Դիմող կազմակերպության/նների նկարագրություն

«Խաղաղության երկխոսություն»-ը Հայաստանում գրանցված հասարակական կազմակերպություն է, որում միավորված են խաղաղության ոլորտում գործունեություն ծավալող տարբեր երկրների ներկայացուցիչներ:

«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպությունը աշխատում է խաղաղության կառուցման ոլորտում:

Առաջնորդվելով «Մարդը՝ լիիրավ եւ պատասխանատու քաղաքացի» սկզբունքով, «ԽԵ»-ն կարեւորում է այնպիսի գիտակցության ձեւավորումը, համաձայն որի պետության եւ յուրաքանչյուրի համար քաղաքացին ու իրավունքը պետք է լինեն բարձրագույն արժեքներ: Քաղաքացիական ակտիվիզմի զարգացման միջոցով «Խաղաղության երկխոսությունը» ձգտում է հասնել խաղաղության մշակույթի կամ խաղաղասիրական շարժման ձեւավորման, որտեղ յուրաքանչյուր ոք գիտակցում է իր դերն ու պատասխանատվությունը իր համայնքում, երկրում եւ տարածաշրջանում խաղաղության ձեռքբերման եւ պահպանման գործում, օժտված է իր երկրի իշխանություններից խաղաղություն պահանջելու իրավունքով, պայքարում է հանուն իրավունքի գերակայության, սոցիալական արդարության, հասարակական եւ քաղաքական գործընթացներում քաղաքացիական ակտիվ մասնակցության: Նշվածին հանելու ուղիներն են.

[Քաղաքացիական խաղաղասիրական ներուժի զարգացում,](#)

[Մարդու իրավունքների եւ ժողովրդավարական արժեքների նկատմամբ հարգանքի պատվաստում,](#)

[Օժանդակություն՝ խաղաղասիրական քաղաքացիական նախաձեռնություններին, Հակամարտությունների արդյունքում տուժածների շահերի պաշտպանություն](#)

Ծրագրի նկարագրություն

Խրավիճակի նկարագրություն

Վերջին տարիների ընթացքում Վանաձոր համայնքում սկսվեց ավելի շատ խոսվել քաղաքային տրանսպորտի հետ կապված խնդիրների մասին: Քաղաքացիների և ակտիվիստների դժգոհությունները կապված էին տրանսպորտի ոլորտում առկա մի շարք խնդիրների հետ, մասնավորապես՝

- մի շարք երթուղիներում չեն կատարվում ՏԻՄ եւ երթուղիները սպասարկող ՍՊԸ-ների միջեւ պայմանագրով նախատեսված [վացուցակին](#) համապատասխան երթերը
- համապատասխան փոխադրամիջոցների աշխատաքի հետ, ինչը որոշ դեպքերում չեն թաքցնում նույնիսկ [պատկան](#) մարմինները:
- երթուղային տաքսիներում առկա են ոչ սանիտարահիգիենիկ պայմաններ, իսկ վարորդները հանրային փոխադրամիջոցը վարելու ընթացքում [ծխում են](#), խախտելով Ծխախոտի սպառման, իրացման եւ սահմանափակումների մասին ՀՀ օրենքի պահանջները:
- տրանսպորտային միջոցների վարորդները որոշ դեպքերում քաղաքացիներին տեղափոխում են [հարքած](#), ակոհոլ օգտագործած վիճակում:
- տրանսպորտային միջոցներն ունեն տեխնիկական անբարվոք վիճակ, օրինակ՝ երթուղայինը աշխատանքը կատարում է անսարք վիճակով, մասնավորապես՝ [դուռը ջարդված](#)՝ բաց վիճակով և այլն:

Կարծում ենք, որ նշված խնդիրները ոլորտի պատասխանատու մարմնի անգործության հետևանք են:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի համաձայն՝ տրանսպորտի բնագավառում համայնքի ղեկավարն իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները՝
(...)

2) կանոնակարգում է հասարակական տրանսպորտի աշխատանքը համայնքում, կազմակերպում է համայնքային ենթակայության տրանսպորտային ձեռնարկությունների և կազմակերպությունների գործունեությունը (սույն լիազորությունը չի իրականացնում թաղային համայնքի ղեկավարը):

Ոլորտի պատասխանատուների կողմից դրսևաորած անգործությունը իր հերթին ձևավորում է անպատժելիության մթնոլորտ, ինչի արդյունքում ամեն օր խախտվում են բնակիչների իրավունքները:

Ոլորտի սպասարկումը իրականացվում է ձեռնարկատիրական գործունեության միջոցով և գաղտնիք չէ, որ այս ոլորտում առկա է ֆինանսական մեծ շրջանառություն, գումարային հոսքեր և ձեռնարկատերերի հետաքրքրություն ոլորտի նկատմամբ: Նաև հաճախակի խոսվում է ոլորտում մրցույթների անցկացման խախտումների և հովանավորչության մասին, ինչը ևս վկայում է ոլորտը սպասարկող կազմակերպությունների մեծ եկամուտների և շահույթի մասին:

Ենթադրվում է, որ ոլորտի նկատմամբ պատշաճ վերահսկողության բացակայությունը և առկա անպատժելիության մթնոլորտը պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում ոլորտում առկա ֆինանսական շրջանառության հետ, այլ կերպ ասած՝ պաշտոնատար անձանց անգործությունը կարող է պայմանավորված լինել ոլորտի պատասխանատուների անձնական շահագրգռվածությամբ:

Այսպիսով վերը նշված հետևությունները վկայում են այն մասին, որ Վանաձորի քաղաքային տրանսպորտի ոլորտում ակնհայտ են կոռուպցիոն ռիսկերի առկայությունը վկայող բոլոր անհրաժեշտ պայմանները:

Այս պարագայում, հարկն է նշել, որ «Թրանսփարենսի ինթերնեշնլ» միջազգային ոչ կառավարական կազմակերպության կողմից կոռուպցիան սահմանվում է այսպես. Կոռուպցիան վստահված իշխանության չարաշահումն է՝ անձնական շահ ստանալու նպատակով:

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրում կոռուպցիան սահմանվում է այսպես՝ «անձնական կամ այլ շահադիտական նպատակով տարբեր ձևերով արտահայտված (գործողությամբ կամ անգործությամբ) ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահում»:

Պաշտոնատար անձանց չարաշահումների, ոլորտում առկա գումարային շրջանառության և բնակիչների խախտված իրավունքների փոխկապակցվածության մասին է վկայում հետևյալ օրինակը. սկսած 2014թ. սկզբից «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն փորձել է Վանաձորի քաղաքապետարանից ճշտել, թե արդյոք կա քաղաքային տրանսպորտի գործունեությունը վերահսկող կառույց, ինչի արդյունքում պարզ է դարձել, որ Վանաձոր համայնքի ղեկավարի հրամանով հիմնադրվել է 2003թ-ին հիմնադրվել է «Վանաձորի տրանսպորտի եւ առևտրի ծառայություն » ՍՊԸ-ն, որը գործում է քաղաքապետարանում և որի ստեղծման ծախսերը հոգալու համար ավագանու որոշմամբ համայնքի պահուստային ֆոնդից հատկացվել է 800 000 դրամ, բայց տրամադրվել է 600 000 դրամ: Ընդ որում, ՍՊԸ-ն տեղակայված է համայնքապետարանի «Առևտրի, սպասարկման, տրանսպորտը համակարգող բաժնի» թիվ 312 սենյակում: Իսկ թե ինչպես են կարգավորվում հարաբերությունների քաղաքապետարանի և տվյալ ՍՊԸ-ի միջև կամ թե ինչպես է ՍՊԸ-ն պարտավորվում իրականացնել Վանաձոր համայնքի հանրային տրանսպորտի գործունեության վերահսկողությունը որևէ կերպ կամ որևէ տեղ ամրագրված չէ, քանի որ վերջինների միջև պայմանագիր գոյություն չունի:

Ակտիվիստները գտնում են, որ այս գործընթացը իր մեջ լուրջ կոռուպցիա է պարունակել:

Ինչպես նաև, երթուղիները սպասարկող ՍՊԸ-ների եւ քաղաքապետարանի միջև կնքված պայմանագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ երթուղիները սպասարկող կազմակերպությունների համար նախատեսված չէ որևէ պատասխանատվություն պայմանագրի կետերը խախտելու դեպքերի համար: Ասել է թե, քաղաքապետարանի եւ ՍՊԸ-ների միջև հարաբերությունները կարգավորող մեխանիզմները եւս գրեթե բացակայում են կամ բացառապես թերի են:

շահառուները

Չնայած ակտիվիստների և քաղաքացիների բողոքներին, եւ այն հանգամանքին, որ պատկան մարմինները ընդունում են, որ ոլորտում կան լուրջ խնդիրներ, այնուամենայնիվ, քաղաքային տրանսպորտի ոլորտը մնում է անբերակարգ, ոլորտում

առկա խնդիրները խորապես չուսումնասիրված, ինչի արդյունքում բացառապես տուժում է Վանաձոր քաղաքի բնակչությունը, որը մասամբ վիճակի փոփոխության ուղղված որևէ գործիքի չի տիրապետում, և հաճախ տեղյակ էլ չէ այս ոլորտում ինչ քայլեր կարող է ձեռնարկել ոլորտի բարելավման համար:

Որպես ծրագրի շահառուներ հանդես կգան՝

- «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի կայք էջի լսարանը (300-400 անհատ ամսական ՀՀ-ից) և ֆեյսբուքյան էջի հետևորդները (2000 հոգի)
- Լոռի տվ-ի հեռուստադիտողները, որը ներառում է ամբողջ Վանաձոր քաղաքը (85700 բնակիչ)
- Ասպարեզ օրաթերթի (Վանաձորում վաճառքը 500-2000) և կայք էջի և ֆեյսբուքյան էջի հետևորդները (3200 հոգի):

նպատակը

Ծրագիրը նպատակ ունի հասնել կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը՝ Վանաձոր քաղաքի տրանսպորտի կազմակերպման, իրականացման եւ վերահսկման ոլորտում:

խնդիրները

Ծրագրի անձնագրը նպատակին հասնելու համար փորձելու է լուծել հետևյալ խնդիրները՝

1. Ուսումնասիրել եւ վերհանել Վանաձոր համայնքի տրանսպորտի ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը՝ ինչ նպատակով էլ նախատեսվում է իրավաբանի օգնությամբ ուսումնասիրել
 - a) Վանաձոր քաղաքում երթուղայինների շահագործման համար հայտարարված մրցույթների անցկացման ընթացակարգը եւ դրանց համապատասխանությունը օրենքին, ինչպես նաեւ՝ մրցույթը շահելու համար սահմանված չափորոշիչները, եթե այդպիսիք առկա են:
 - b) Շահած կազմակերպությունների պայմանագրերը և նրանց պարտավորությունները ու դրանց իրականացման աստիճանը:
 - c) Վանաձոր քաղաքի տրանսպորտի հետ կապված թղթաբանությունը և նրա համապատասխանությունը օրենքի և տրանսպորտի գործունեության հետ:
2. Ուսումնասիրել եւ վերհանել տեղական և պետական կառույցների դերը համայնքային տրանսպորտի կազմակերպման եւ համակարգման ոլորտում, որի նպատակով նախատեսվում է իրավաբանի օգնությամբ ուսումնասիրել՝
 - a) օրենքը և պարզել, թե պետական և տեղական ո՞ր կառույցները դեր ունեն համայնքային տրանսպորտի ոլորտում և ինչու՞մ է կայանում այդ դերը:
 - b) համայնքային որոշումները և իրավական ակտերը, պարզելու համար թե տեղական մակարդակով ի՞նչ իրավաբանական աձիք դեր ունեն այս ոլորտում և ո՞րն է այդ դերը:
 - c) պարզել, թե այդ մարմինները ինչքանո՞վ են իրականացնում իրենց գործառնությունները:
3. ինչպես նաև՝ ծրագիրը փորձելու է հանրային պահանջարկ ձևավորել խնդրի կարգավորման ուղղությամբ, որի նպատակով նախատեսվում է լրատվամիջոցների օգնությամբ՝
 - a) վեր հանել և ավելի լսելի դարձնել այս ոլորտում քաղաքացիների ավելի լայն շրջանակների դժգոհությունը՝ կապված քաղաքային տրանսպորտի գործունեության հետ:

- b) կազմակերպել քննարկումներ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ՝ խնդրի ավելի խորը ուսումնասիրության և լուծումներ գտնելու համար:
- c) պարբերաբար ավելի լայն շրջանակներին հասցնել ծրագրի ընթացքում վեր հանված խնդիրները և առաջարկվող լուծումները:

Ժամանակացույց

Շաբաթ	Գործողություն
1-2-րդ	Իրավաբանը պատրաստում է հարցումներ ուղղված պետական և տեղական մարմիններին
2-3-րդ	Լրագրողը պատրաստում է նյութ, որտեղ քաղաքացիները անդրադառնում են Վանաձոր համայնքի տրանսպորտի հետ կապված խնդիրներին
4-5-րդ	Լրագրողը պատրաստում է նյութ, որտեղ քաղաքի ակտիվիստները անդրադառնում են Վանաձոր համայնքի տրանսպորտի ոլորտում առկա խնդիրներին և իրենց կատարած աշխատանքներին կապված ոլորտի բարելավման հետ
6-7-րդ	Հարցումների պատասխանների ստանալուց հետո իրավաբանը կատարում է դրանց ուսումնասիրություն և վերլուծություն
8-րդ	Միջանկյալ հաշվետվության պատրաստում
9-րդ	Լրագրողը պատրաստում է նյութ, որտեղ պետական մարմինները անդրադառնում են համայնքերում առկա տրանսպորտային խնդիրներին և դրանց բարելավմանը ուղղված և պլանավորվող աշխատանքներին
10-11-րդ	Ծրագրի անձնակազմը կազմակերպում է հեռուստահոդորդում-քննարկում, որտեղ շահագրգիռ կողմերը անդրադառնում են տրանսպորտի ոլորտում առկա խնդիրներին և հանդես են գալիս առաջարկներով
11-12-րդ	Ծրագրի անձնակազմի կողմից առաջարկությունների փաթեթի պատրաստում: Փաթեթի ուսումնասիրություն շահագրգիռ կողմի հետ և նրանց առաջարկությունների հավաքագրում
13-րդ	Առաջարկությունների ներառում առաջարկությունների փաթեթի մեջ
14-15-րդ	Հեռուստահաղորդման պատրաստում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ, որտեղ կներկայացվի առաջարկությունների փաթեթը: Առաջարկությունների փաթեթի ուղարկում պատկան մարմիններին:
1-16-րդ	Լրագրողը պատրաստով է թվով 5 նյութ, որտեղ պատմվում է ծրագրի ընթացքի և արդյունքների մասին:

Միավոր	Միավորի համար	Միավորի զին	ՀԵԻԱ-ից պահանջվող գումար	Ներդրման գումար	Ընդհանուր
1. Աշխատակազմ (ծրագրի աշխատակազմ աշխատավարձ և փորձագետների հոնորարներ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերն ու պարտադիր վճարները)	ամիս		գումար		
Ծրագրի ղեկավար	4	70 000	280 000		280 000
Ծրագրի ղեկավարի օգնական	4	68 000	272 000		272 000
Իրավաբան	1	90 000	90 000		90 000
Լրագրող	1	80 000	80 000		80 000
<i>հաշվապահ</i>	<i>4</i>	<i>40000</i>	<i>160 000</i>	<i>160 000</i>	
2. Ճանապարհածախս (միայն տաքսի ծառայության վճար)					
Տաքսի ծառայության վճար	4	13 200	52 800		52 800
3. Գրասենյակային պարագաներ					
<i>Գրասենյակի վարձակալություն</i>	<i>4</i>	<i>145 000</i>	<i>580 000</i>	<i>580 000</i>	
Թուղթ, տպող սարքի ներկ, նամակագրության հետ կապված ծաղսեր	1	25 000	25 000		25 000
<i>Հեռախոսային և ինտերնետային ծախսեր</i>	<i>4</i>	<i>10 000</i>	<i>40 000</i>	<i>40 000</i>	
4. Հրապարակումներ					
Երկու հեռուստաթեր ԼՈՌԻ ԹՎ	2	60 000	120 000		120 000
5. Այլ ուղղակի ծախսեր					
<i>Լրագրողական տեխնիկայի վարձակալություն (ձայնագրիչ)</i>	<i>4</i>	<i>20 000</i>	<i>80 000</i>	<i>80 000</i>	
6. Ընդհանուր ուղղակի ծախսեր (տողեր 1-5)					
Ընդամենը		446 200	919 800	<i>860 000</i>	1 779 800